

## Լույս է տեսել Սամվել Ս. Շահինյանի նոր ժողովածուն

Հոկտեմբերի 15-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ բնագետ, ՀՊՃՀ գեոէկոլոգիայի ամբիոնի վարիչ, քարանձավագետ Սամվել Շահինյանի «Փակ դռների առաջ մեր սրտերը բաց» Անդինի մատենաշարով լույս տեսած գեղարվեստական գործերի ժողովածուի շնորհանդեսը:

Գրքում տեղ են գտել հեղինակի վերջին յոթ տարիների, հիմնականում անտիպ պատմվածքները, իմաստասիրական էսսեներն ու բանաստեղծությունները՝ ուղեկցված հեղինակի նկարագարողումներով:

Ներկաները հնարավորություն ստացան ծանոթանալու նաև Սամվել Ս. Շահինյանի նախորդ գրքերին և հրատարակված գործերին, այդ թվում նաև Անդին ամսագրում տպագրված հոդվածներին և գրական ստեղծագործություններին: